

Հավելված 3

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



IJEVAN BRANCH OF
“YEREVAN STATE UNIVERSITY”
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.yasu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-13-27-00

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(2020-2021 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

ք. Իջևան

«22» մայիս 2021թ.

Հ/Հ	Միջոցառման ընկերություն	Խորագիրը/ Թեման	Անցկացման ամս օրը	Համառոտ նկարագրությունը
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
1.	Էսսեների մրցույթ	«Հողի շունչը» «Ավետաբեր ձնծաղիկը» «Հայրենիքիս ծառատունկը»	22.02- 03.03	Էսսեների մրցույթին մասնակցել է 6 ուսանող: Համագործակցելով «Հայոց լեզու և գրականություն» ամբիոնի դասախոսներ Աիդա Սարիասյանի և Լուսինե Թումայանի հետ՝ հաղթող է ճանաչվել «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Նարա Մելքումյանը:
2.	124-ամյակին նվիրված Ճանաչողա կան միջոցառում	Եղիշե Չարենց	13.03	Եղիշե Չարենցի 124-ամյակին նվիրված առցանց եղանակով կայացավ ճանաչողական միջոցառում: Միջոցառման ընթացքում ներկայացվել է Եղիշե Չարենցի կյանքի գլխավոր դեպքերը, մատուցվել ստեղծագործությունները, և հնչել նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգերը: Միջոցառմանը ներկա էր 13 ուսանող: Միջոցառումը վարել են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհիներ Նարա

				Մելքումյանը և Ալինա Գրիգորյանը:
3.	107-ամյակին նվիրված ճանաչողական միջոցառում	Համո Սահյան	14.04	Համո Սահյանի 107-ամյակին նվիրված առցանց եղանակով կայացավ ճանաչողական միջոցառում: Միջոցառման ընթացքում ներկայացվել է Համո Սահյանի կյանքի գլխավոր դեպքերը, մատուցվել ստեղծագործությունները, և հնչել նրա բանաստեղծությունների հիման վրա ստեղծված երգերը: Միջոցառմանը մասնակցել են 11 ուսանողներ: Միջոցառումը վարել են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Նարա Մելքումյանը և Նունե Վարդումյանը:
4.	106-րդ տարելիցին նվիրված ճանաչողական միջոցառում	Յեղասպանություն	25.04	Հարգանքի տուրք մատուցվեց անմեղ նահատակների հիշատակին: Անդրադարձ է կատարվել հատկապես եղեռնագոհ հայ մտավորականներին՝ Գրիգոր Զոհրապին, Գուրգեն Սևակին, Միամանթոյին (Ատոմ Յարճանյան), Դանիել Վարուժանին, Կոմիտասին: Հնչել են Կոմիտասի երգերը, մասնակիցները ներկայացրել են վերոնշյալ հեղինակների ստեղծագործությունները ասմունքեցին: Միջոցառմանը մասնակցել է 9 ուսանող: Միջոցառումը վարել են «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհիներ՝ Նարա Մելքումյանը և Ալինա Գրիգորյանը:
5.	Ճանաչողական միջոցառում	«Զգացմունքն իր տեսակներով»	03.05	Մասնակիցները մեծ ոգևորությամբ մասնակցել են հետաքրքիր խաղի, յուրաքանչյուրն իր հետ կապված որևէ հետաքրքիր պատմություն ներկայացրեց, խոսեցին զգացմունքների մասին: Միջոցառմանը մասնակցեցին 11 ուսանողներ: Միջոցառումը վարել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի՝

				Միրանուշ Սարգսյանը:
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
6.	Հանդիպում- դասախոսությ ուն	Հետազոտակա ն աշխատանք	24.02	Մեմինարի ընթացքում համառոտ ներկայացվեց, թե ինչ է հետազոտական աշխատանքը, վերջինիս ու կուրսային աշխատանքի տարբերությունը ու թե ինչպես գրել հետազոտական աշխատանք: Մեմինարի ժամանակ 4-րդ կուրսի մի քանի ուսանողներ ներկայացրեցին իրենց կատարած հետազոտական աշխատանքները:
7.	Հանդիպում - դասախոսությ ուն	Տրամաբանա կան խնդիրների լուծում	10.03	Մեմինարի ընթացքում 1-ին կուրսի մի քանի ուսանողներ, հիմնվելով 1- ին կիսամյակում ստացած գիտելիքների վրա, ներկայացրեցին մի շարք տրամաբանական խնդիրների լուծման մաթեմատի - կական ու ծրագրային (C++) լուծման տարբերակները:
8.	Կոնսուլտա ցիա	Կոնսուլտացի ա	01.04	Կոնսուլտացիայի ժամանակ 4-րդ կուրսի ուսանողը պատասխանեց 1- ին ու 2-րդ կուրսեցիների «ԷՀՄ և ճարտարապետություն» և «Ալգորիթմների տեսություն» առարկաների վերաբերյալ հարցերին: Ընթացքում լուծվեցին նաև մի քանի խնդիրներ:
9.	Դասընթաց	Խմբակ	Մարտ- ապրիլ	Ավելի քան 1 ամիս տևած դասընթացի շրջանակներում 1-ին կուրսի ուսանողները 0-ից սովորեցին ծրագրավորում, իսկ ոմանք էլ արդեն ունեցած գիտելիքները խորացրեցին:
10.	Մրցույթ	«Լավագույն ծրագրավորող 2021»	19.05	Ուսանողներին կտրամադրվի որոշակի ժամանակամիջոց ու մի քանի խնդիր, որոնց ծրագրային իրականացումներ(միայն ֆունկցիա- ները) գրելուց հետո սրանք ենթարկվում են թեստավորման

				որոշակի մուտքային տվյալների վրա:
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
11.	Մարքեթինգի վեբինար		20.02-25.02	Վեբինարը վարեց «Զբոսաշրջություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի՝ Լատիա Ուլիխանյանը: Վեբինարի ընթացքում ուսանողներին փոխանցվեցին մարքեթինգի գործի քակազմի և մարքեթինգային հետազոտությունների վերաբերյալ տեղեկություններ, ընդգծվեցին Marketing Mix-ի արդիականությունը, ինչպես նաև ընթացում տեղի ունենաց խաղ՝ quizizz.com կայքի միջոցով:
12.	Վեբինար	Աշխատանքի արդյունավետ որոնում և գրագետ արձագանքում	10.03-15.03	Վեբինարը անցկացրեց «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի՝ Իրա Վարդանյանը: Վեբինարի ընթացքում ներկա յացվեցին աշխատանքի ընդունման հիմնական փուլերը, ուսանողներին փոխանցվեցին աշխատանքի գրագետ որոնման, ճիշտ ինքնաներ կայացման, ինչպես նաև ռեզյումեի, CV-ի, մոտիվացիոն նամակի գրագետ կազմման հմտություններ:
13.	Ինտելեկտուալ անհատական խաղ		21.04	Խաղը կազմված էր 2 փուլից: Առաջին փուլում մասնակիցները պատասխանեցին մասնագիտական ոլորտին առնչվող իմացական մի շարք հարցերի quizizz.com կայքի միջոցով: Հաջորդ փուլում մասնակիցները պատասխանեցին մասնագիտությանն առնչվող տրամաբանական հարցերի: Խաղի արդյունքներն ամփոփելով՝ հաղթող ճանաչվեց «Զբոսաշրջություն» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Թինա Թամրազյանը:

14.	Ինտելեկտուալ խաղ	"Մոտիվացիոն խաղեր"	05.18	Zoom հարթակում կայացած ինտելեկտուալ խաղի ընթացքում մասնակիցները պատասխանեցին մասնագիտական ոլորտին առնչվող մի շարք հարցերի quizizz.com կայքի միջոցով: Խաղի արդյունքներն ամփոփելով՝ հաղթող ճանաչվեց «Ֆինանսներ» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի Արաքսյա Բաղդասարյանը:
15,	Հանդիպում-դասախոսություն	«Վարկային պատմություն, սքորինգ, վարկային ռեգիստր»	Մայիսի 19	Դասախոսությունը վարեց ԿԲ վարկային ռեգիստրի ղեկավար Գայանե Բարսեղյանը: Դասախոսության ընթացքում ներկայացվեց, թե ի՞նչ են վարկային գիծը, վարկային պատմությունը, «սկզբակը» և վարկային սքորինգը, ինչպես նաև պարզաբանվեց, թե ի՞նչ սկզբունքով են բանկերը վարկավորում իրականացնում, ինչպե՞ս և ի՞նչ մարմնից կարելի է ձեռք բերել անձնական վարկային պատմությունը: Դասախոսության ավարտին տեղի ունեցավ բովանդակալից քննարկում: Տրվեցին մասնակիցներին հուզող բոլոր հարցերի պատասխանները:
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
15.	Լոգոների մրցույթ	«Նորաձևություն»	24.03-28.04	Մրցույթի նպատակն էր զարգացնել ուսանողների ստեղծագործական միտքը: ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց մրցույթի հայտադրումը: Մրցութային կարգով՝ հատուկ հանձնաժողովի կողմից ընտրվեց լավագույն լոգոն: Հաղթողը պարգևատրվեց նվերով:

16	Այց- իրագրելում	«Կողբի գեղարվեստա- տի դպրոց»	17.05	Կատարվեց ԿԱՖ ի ուսանողների այց «Կողբի գեղարվեստա- տի դպրոց»: Այցի ընթացքում ուսանողները ծանոթացան կառույցի գործունեությանը, ինչպես նաև ներգրավվեցին դպրոցում կայանալիք բուն գործընթացի իրականացմանը:
17.	Հանդիպում- դասախոսու- թյուն	«Սանդրո Բոտիչելլի»	04.05	Դասընթացը իրականացվեց առցանց տարբերակով: ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց մասնակցության հայտադիմումը: Դասընթացի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել նկարչի կյանքին և ստեղծագործություն ներին, ինչպես նաև ստեղծագոր- ծությունների վերաբերյալ կատարվեց քննարկում:
18.	Կինոդիտում	Վան Գոգի «Հավերժության շեմին»	19.05	Կինոդիտման նպատակն էր ծանոթանալ ֆիլմի գլխավոր դերակատար Վան Գոգի կյանքի վերջին տարիներին ու ստեղծագործական գործունեությանը: Վան Գոգը տարված էր գեղանկարչությամբ և երագում էր աշխարհը փոխել: Ինչպես իրական հանճար, նա միշտ գտնվում էր հավերժության շեմին:
ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ ԽՄԲԱԿ				
20.	Ժամանակա կից հայոց լեզու	Հնչյուն, ձայնավոր, բաղաձայն հնչյուններ, երկհնչյուններ, վանկ, շեշտ	11.02	Դասընթացին ներկայացվեց հնչյու- նաբանություն թեման: Խոսվեց ձայնավոր, բաղաձայն հնչյունների, երկհնչյունների, վանկի, շեշտի մասին: Մաս նակիցները կատարեցին առա- ջադրանքներ թեմայի վերա բերյալ:

				Դասընթացավար՝ Ռոզա Բաղդամյան:
21.	Խոսքի մշակույթ	Զրույցի կանոններ, բառագործածության սխալներ	13.02	Դասընթացին ներկայացվեց խոսքային վարվելակերպի, զրույցի կանոնները, մասնակիցները հանդես եկան մեջբերումներով, լրացումներով ու իրենց տեսակետի արտահայտմամբ: Խոսվեց բառագործածության սխալների մասին, որոնց առնչությամբ մասնակիցները կա տարեցին բանավոր առաջադրանքներ: Դասընթացավար՝ Նունե Վարդումյան:
22.	Հայ գրականություն	Հ. Թումանյանի կյանքը	16.02	Դասընթացին ներկայացվել է Հովհաննես Թումանյանի կյանքը, պատմություններ և ասույթներ նրա մասին: Հետաքրքիր պատմություններով և ասույթներով կիսվեցին նաև մասնակիցները, իսկ վերջում մասնակիցները հանդես եկան Հ. Թումանյանի քառյակների ասմունքով: Դասընթացավար՝ Սիրանուշ Սարգսյան
23.	Կինոդիտում	«Մենք ենք մեր սարերը»	20.02	Առցանց տարբերակով ցուցադրվել է «Մենք ենք մեր սարերը» գեղարվեստական կինոնկարը, որը նկարահանվել է Հրանտ Մաթևոսյանի համանուն ստեղծագործության հիման վրա, Հայֆիլմ կինո ստուդիայում 1969 թվականին: Կազմակերպիչ՝ Ռոզա Բաղդամյան:
24.	Հայ գրականություն	Հ. Թումանյանի ստեղծագործությունները	21.02	Դասընթացին ներկայացվել են Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները, մասնակիցները ասմունքել են քառյակներ և բանաստեղծական հատվածներ: Ցուցադրվել են Հ. Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա

				նկարա հանված տեսանյութեր և երգեր: Դասընթացավար՝ Նունե Վարդումյան:
25.	Ժամանակակից հայոց լեզու	Ուղղագրություն	23.02	Դասընթացին ներկայացվել են ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների ուղղագրական կանոնները: Տեղի ունեցավ բանավոր քննարկում՝ դժվար ուղղագրություն ունեցող բառերի վերաբերյալ: Դասընթացավար՝ Մերի Ստեփանյան:
26.	Ցերեկույթ	Մայրենի լեզվի միջազգային օր	24.02	Տեղի ունեցավ Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված գրական ցերեկույթ: Ցերեկույթին ներկա էին «Հայոց լեզու և գրականություն» բաժնի ուսանողներ և դասախոսներ: Միջոցառման մասնակիցները հանդես եկան մայրենի լեզվին նվիրված ոգեշունչ բանաստեղծություններով ու էսսե ներով (Միրանուշ Սարգսյան. «Հրեշտականման լեզու»), ներկայացրին մայրենիին նվիրված տոնի նախապատմությունը: Միջոցառման վերջում մայրենի լեզվի արժևորման խոսքով հանդես եկան Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Վ.Ավագյանը և ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ Կ.Պողոսյանը: Պատասխանատու՝ Միրանուշ Սարգսյան:
27.	Ժամանակակից հայոց	Ուղղագրություն	26.02	Դասընթացին ներկայացվել է մեծատառերի գրությունը, բաղադրյալ

	լեզու	ն		բառերի՝ գծիկով, անջատ գրությունները: Կատարվել է բանավոր քննարկում դժվար ուղղագրություն ունեցող բառերի վերաբերյալ, ինչպես նաև առաջադրանքներ՝ գիտելիքի ամրապնդման համար: Դասընթացավար՝ Մերի Ստեփանյան:
28.	Ժամանակակից հայոց լեզու	Ուղղագրություն	28.02	Դասընթացին անդրադարձ է կատարվել ուղղագրական առաջադրանքներին, մասնակիցները միասին լուծել են խաչբառ՝ դժվար ուղղագրություն ունեցող բառերի վերաբերյալ, այնուհետև դասի վերջում ամսվա ծրագրի ամփոփում է կատարվել Quizizz կայքով կազմված խաղի միջոցով: Դասընթացավար՝ Մերի Ստեփանյան:
29.	Հայ գրականություն	Եղիշե Չարենցի կյանքը	03.03	Դասընթացին ներկայացվել է Եղիշե Չարենցի կյանքը: Քննարկվել են մեծերի խոսքերը՝ ուղղված Չարենցիին: Դասն ամփոփվել է Չարենցի մասին տեսանյութեր դիտելով: Դասընթացավար՝ Մերի Ստեփանյան:
30.	Հայ գրականություն	Եղիշե Չարենցի ստեղծագործությունները	05.03	Դասընթացին ներկայացվել են Եղիշե Չարենցի ստեղծագործությունները: Մասնակիցներն ընթերցել և ասմունքել են հեղինակի բանաստեղծություններից, ամրապնդել գիտելիքները խաղերի միջոցով: Դասընթացավար՝

				Անուշ Աղաջանյան:
31.	Ժամանակակից հայոց լեզու	Բառի ուսմունք, մենիմաստ, բազմիմաստ բառեր, դարձվածքներ	10.03	Դասընթացին ներկայացվել է բառագիտություն բաժինը՝ բառը, բառերի ուղիղ և թեք ձևերը, խոսվել է բառերի մենիմաստության և բազմիմաստության, դարձվածքների մասին: Կատարվել են առաջադրանքներ նշված թեմա ներով: Վերջում մասնակից ները կազմեցին փոքրիկ տեքստեր՝ օգտագործելով դարձվածքներ: Դասընթացավար՝ Նունե Վարդումյան:
32.	Ժամանակակից հայոց լեզու	Բառերի ձևիմաստային խմբերը	14.03	Դասընթացին ներկայացվել են համանունները, հարանունները, հոմանիշները, հականիշները: Կատարվել են առաջադրանքներ թեմայի առնչությամբ: Տեքստային վարժությունների միջոցով մասնակից ներն ամրապնդել են ստացած գիտելիքները: Դասընթացավար՝ Նունե Վարդումյան:
33.	Ժամանակակից հայոց լեզու	Բառի կառույց	16.03	Դասընթացին ներկայացվել է բառի կառույցը՝ արմատ, ածանց, վերջավորություն, տրվել է վերջաձանցի և վերջավորության տարբերակում: Դասն ամփոփվել է առաջադրանքներով: Դասընթացավար՝ Ռոզա Բաղդամյան:
34.	Ժամանակակից հայոց լեզու	Գործնական առաջադրանքներ	20.03	Դասընթացին կատարվել են բառի կառույցին վերաբերող առաջադրանքներ, տարբեր խաղեր: Մաս

				նակիցներին տրվել է խոսքի ազատ շարադրանք: Դասընթացն ավարտվել է բանաստեղծության քննարկմամբ Դասընթացավար՝ Ռոզա Բաղրամյան:
35.	Հայ գրականություն	Վահան Տերյանի կյանքը և ստեղծագործությունները	23.03	Դասընթացին ներկայացվել է Վահան Տերյանի կյանքի և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Նյութն ավելի մատչելի դարձնելու համար կատարվել են առաջադրանքներ և խաղեր: Պատասխանատու՝ Լուսինե Դավթյան:
36.	Ժամանակակից հայոց լեզու	Դիմում, նամակ, արձանագրություն	26.03	Դասընթացին ներկայացվել են նամակ, դիմում, արձանագրություն գրելու հիմնական օրինաչափությունները: Խաղերի և հետաքրքիր առաջադրանքների միջոցով ամրապնդվել է տեսական նյութը: Դասընթացավար՝ Լուսինե Դավթյան:
37.	Ժամանակակից հայոց լեզու	Գոյական անուն	13.04	Դասընթացին ներկայացվել է գոյական խոսքի մասը: Խոսվել է գոյականի դեմքի, թվի, հոլովի, հոլովման, որոշյալ, անորոշ առումների մասին: Նյութն առավել մատչելի դարձնելու նպատակով կատարվել են առաջադրանքներ և վարժություններ: Դասն ամփոփվել է հետաքրքիր խաղով: Դասընթացավար՝ Անուշ Աղաջանյան:
38.	Ժամանակակից հայոց լեզու	Ածական,	19.04	Դասընթացին ներկայացվել են

	կից հայոց լեզու	թվական		ածական և թվական անուն խոսքի մասերը՝ իրենց տեսակներով: Թեմայի վերաբերյալ կատարվել են առաջադրանքներ, իսկ վերջում դասն ամփոփվել է ստեղծագործական փոքրիկ աշխատանքով: Դասընթացավար՝ Ռոզա Բաղրամյան:
39.	Ժամանակա կից հայոց լեզու	Դերանուն	29.04	Դասընթացին մասնակցները ծանոթացան դերանուններին, նրա տեսակներին, խոսվեց նաև վերջիններիս գործածության ու նախադասության մեջ զբաղեցրած պաշտոնների մասին: Կատարվեցին վարժություններ, ստեղծագործական աշխատանքներ, որոնց շնորհիվ դասընթացի նյութն ավելի ըմբռնելի դարձավ: Դասընթացավար՝ Լուսինե Դավթյան:
40.	Ժամանակա կից հայոց լեզու	Բայ	03.05	Դասընթացին ներկայացվել է բայ խոսքի մասը: Խոսվել է բայի դեմքի, թվի, եղանակի, ժամանակի, սեռի մասին: Կատարվել են առաջադրանքներ և վարժություններ: Դասն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով կիրառվել է խաղային մեթոդը: Դասընթացավար՝ Մերի Ստեփանյան:
ՊԱՏՄԱԲԱՆՆՆԵՐԻ ԽՄԲԱԿ				

41.	Հայկական լեռնաշխարհ	Հայկական լեռնաշխարհի աշխարհագրա կան դիրքը: Գետեր, լճեր:	11.02	Առաջին դասընթացին մասնա կիցներին ներկայացվեց Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, սահմանները, գետերը և լճերը, բարձր գագաթները, Մեծ Հայքի նահանգները: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան:
42.	Հայոց ծագումնաբա նությունը	Հնդեվրոպական նախահայրենիք: Հայոց ծագումնաբանու թյան վերաբերյալ ավանդազրույց ները:	14.02	Դասընթացին ներկայացվել է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, որն իր մեջ ներառում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման պոցեսը, առավել մանրամասն ներկայացվել է հայկական, հունական, վրացական, հին եբրայական, արաբական ավանդությունները, նաև հայերի եկվորության մասին ներկայացվող տեսակետները: Դասընթացավար՝ Մերի Բեգինյան:
43.	Վաղ պետական կազմավորում ները	Արատտա, Միտաննի, Հայասա թագավորությո ւններ, Նաիրյան երկրներ: Հայկազունինե րի Արարատյան թագավորութ յուն:	18.02	Դասընթացին ներկայացվել է վաղ պետական կազմավորումները, ինչպես նաև Ուրարտուի կազմա վորումը: Դասընթացավար՝ Գոհար Գևորգյան
44.	Վանի թագավորութ յուն	Թագավորութ յան կազմավորումը	20.02	Դասընթացին ներկայացվել է Վանի համահայկական թագավորության կազմավորման և հզորացման գործընթացը: Խոսվել է Վանի թագա

		, ուժեղացումը;		վորների իրականացրած արտաքին և ներքին գործունեության մասին: Դասընթացավար՝ Հասմիկ Մարգարյան
45.	Վանի թագավորությո ւն (շարունակու թյուն)	Վանի թագավորութ յան թու լացումն ու անկումը:	26.02	Դասընթացին ներկայացվել է Վանի թագավորության թուլացումն ու անկումը, խոսվել է Սարդուրի II, Ռուսա I, Արգիշտի II, Ռուսա II թագավորների գահակալության մասին, ինչպես նաև կիմերների, սկյութների և մարերի ներխու ժումների մասին: Դասընթացավար՝ Սոսե Զանինյան
46.	Ամփոփում	Հայկական լեռնաշխարհից մինչև Վանի թագավորութ յան թուլացումն ու անկումը (ներառյալ);	28.02	Դասընթացին ներկայացվել է փետրվար ամսվա ընթացքում անցած ողջ նյութը: Ամփոփումը կատարվել է Quizizz կայքի միջոցով: Ներկայացվել է Հայկական լեռնաշխարհից մինչև Վանի թագավորության անկումը (ներառյալ): Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան:
47.	Երվանդունի ների դինաստիա	Երվանդունի ների հաստատումը, Երվանդ Սակավակյաց, Տիգրան Երվանդյան:	02.03	Դասընթացին ներկայացվել է Երվանդունիների թագավորության հաստատումը, Երվանդ I և Տիգրան Երվանդյանի գահակալումը: Մանրակրկիտ խոսվել է Բեհիս թունյան արձանագրության, Ք.ա.401 թ. հունական արշավանքը և Երվանդ II արքայի (Օրոնտես) մասին: Այնուհետև վերջում դասը ավարտվել է մասնակիցների բոլոր քննարկմամբ:

				Դասընթացավար՝ Կարինե Օհանյան
48.	Հնդկաստան	Հնդկաստանի աշխարհագրական դիրքը, սկզբնաղբյուրները, կաստաներ:	07.03	Դասընթացին ներկայացվել է Հնդկաստանի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմական սկզբնաղբյուրները, մշակույթը, կաստաները: Դասապրոցեսը անցավ ակտիվ քննարկմամբ՝ հարց ու պատասխանով: Դասընթացավար՝ Մերի Բեգինյան
49.	Հայաստանը Աքեմենյան աշխարհակալության մեջ: Երվանդունիների անկումը:	Դարեհ I: Բեհիսթունյան արձանագրություն: Քսենոփոնը և Հայաստանը: Երվանդ II: Հայաստանի անկախացումն ու անկման պատճառները:	09.03	Դասընթացին ներկայացվել է Երվանդունիների արքայատոհմը Աքեմենյան աշխարհակալության կազմում և անկումը: Իրականացվել է ակտիվ քննարկում և հետաքրքիր հարցերի պարզաբանում: Դասընթացավար՝ Գոհար Գևորգյան
50.	Արտաշեսյան դինաստիայի հիմնումը	Արտաշես I-ի բազմելը հայոց գահին, արտաքին և ներքին քաղաքականությունը: Տիգրան I: Արտավազդ I:	12.03	Դասընթացին ներկայացվել է Արտաշես Ա-ի բազմելը հայոց գահին, նրա վարած արտաքին ու ներքին քաղաքականությունը, կատարած ռեֆորմները, ինչպես նաև նրա հաջորդների՝ Տիգրան Ա-ի և Արտավազդ Ա-ի գահակալումը: Դասընթացավար՝ Հասմիկ Մարգարյան
51.	Հնդկաստան (շարունակություն)	Մանուի օրենքները: Մագաթխայի բարձրացումը:	19.03	Դասընթացին ներկայացվել է Մանուի օրենքները, որոնք երկար ժամանակ գործել են Հին Հնդկաստանում, ինչպես նաև

		Մաուրյան տերության ստեղծումը:		Մագաթխայի բարձրացման, Չանրագուպտայի կառավարման ու նվաճողական քաղաքականության, Մաուրյան պետության ստեղծման մասին: Դասի ընթացքում խոսվել է Աշոկայի գահակալման ու բուդդիզմի հաստատման մասին: Դասընթացավար՝ Սոսե Զանինյան
52.	Տիգրան II Մեծ:	Տիգրանի բազմելը հայոց գահին: Հայ-հռոմեական պատերազմը:	21.03	Դասընթացին ներկայացվել է Տիգրան Մեծի արտաքին և ներքին քաղաքականությունը, Տիգրանա կերտի մայրաքաղաքի կառուցումը, ինչպես նաև հայ-հռոմեական պատերազմներն ու Ք.ա.66 թ. կնքված Արտաշատի պայմանագիրը: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
53.	Արտավազդ II	Արտավազդ II-ի արտաքին և ներքին քաղաքականությունը, հռոմեա-պարթևական պատերազմը:	26.03	Դասընթացին ներկայացվել է Արտավազդ II-ի գահակալումը, նրա վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, հռոմեա-պարթևական պատերազմներն ու այդ պատերազմներում Մեծ Հայքի մասնակցությունն ու քաղաքական դիրքորոշումը: Դասընթացավար՝ Կարինե Օհանյան
54.	Ամփոփում	Երվանդունիների դինաստիայից մինչև Արտավազդ Բ և հռոմեա-պարթևական պատերազմները	28.03	Դասընթացին բանավոր հարցադրումների միջոցով ամփոփվել է Երվանդունիների թագավորությունից մինչև Արտավազդ II և հռոմեա-պարթևական պատերազմները (ներառյալ), ինչպես նաև Հնդկաստանն ամբողջությամբ:

		(ներառյալ), ինչպես նաև Հնդկաստանն ամբողջությամբ:		Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
55.	Հին Չինաստան	Չինաստանի աշխարհագրա- կան դիրքը: Ցին Շի Հուանդի:	15.04	Դասընթացին ներկայացվել է հնագույն քաղաքակրթության օրրան ներից մեկի՝ Չինաստանի մասին: Խոսվել է նրա աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, դասակարգերի, ու պատմական փուլաբաժանումների մասին, ինչպես նաև Չինաստանի ամենանշանավոր կայսրերից մեկի՝ Ցին Շի Հուանդիի կառավարման ու Չինական պատի կառուցման մասին: Դասընթացավար՝ Մերի Բեգինյան
56.	Արտաշեսյան արքայատոհ- մի անկումը	Արտաշեսյան հարստություն ը վերջին գահակալների օրոք:	17.04	Դասընթացին ներկայացվել է Արտաշեսյան թագավորության անկումը: Կատարվեն են համեմա- տություններ այլ երկրների պատմությունների հետ: Այնուհետև դասի վերջում մասնակիցների հետ միասին ամփոփվեցին տարբեր թեմաներ: Դասընթացավար՝ Գոհար Գևորգյան:
57.	Հայաստանը I դարի սկզբին: Արշակունյաց հարստության հիմնումը	Հայկական գահը դրածոների օրոք: Կորբուլոնի արշավանքը	22.04	Դասընթացն ներկայացվել է Հայաստանը մ. թ. ա. I դարի սկզբին, ինչպես նաև դրածո թագավորների, Հռոմի և Պարթևստանի վարած քաղաքականության մասին: Ման- րակրկիտ պարզաբանվել է հռոմեա-

		Հայաստան: Տրդատ I:		պարթևական պատերազմների և Տրդատ I-ի գահակալման մասին: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
58.	Հունաստան	Հունաստանի աշխարհագրա- կան դիրքն ու կլիմայական պայմանները:	24.04	Դասընթացին ներկայացվել է Հին Հունաստանի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, հույների բնակեցումն ու եղանակային պայմանները: Դասն ամփոփվել է անցած թեմաների ակտիվ քննարկմամբ: Դասընթացավար՝ Մոսե Զանինյան
59.	Հայաստանը I դարի վերջից մինչև II դարի վերջը	Սանատրուկ II: Վաղարշ I: Հայոց գահը օտար գավթիչների ձեռքին:	29.04	Դասընթացին ներկայացվել է պարսկա-հռոմեական հարաբերությունները I դարում և Հայաստանի դերը, ինչպես նաև Հայաստանում Արշակունիների դինաստիայի հաստատումն ու ամրապնդումը: Կից ներկայացվել է Հռոմի և Սասանյան Պարսկաստանի արտաքին քաղաքական դրությունը: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան

60.	Հայաստանը IV-րդ դարի սկզբին	Հայաստանը Տրդատ III Մեծի օրոք	01.05.	Դասընթացին ներկայացվել է Տրդատ III-ի թագադրումը, նրա վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, ինչպես նաև քրիստոնեության մուտքը Հայաստան: Դասը ամփոփվել է ակտիվ քննարկմամբ: Դասընթացավար՝ Կարինե Օհանյան
61.	Ամփոփում	Հայ ժողովրդի արարումից մինչև Տրդատ III Մեծի գահակալումը:	05.05	Դասընթացին կատարվել է "Իններորդ լեգեոնի արծիվը" ֆիլմի քննարկում, ինչպես նաև ամփոփեցին կիսամյակի ընթացքում անցած ողջ նյութը, որն իր մեջ ներառում էր հայ ժողովրդի արարումից մինչև Տրդատ III Մեծի գահակալումը: Այս ամենին զուգահեռ սովորեցին հնագույն քաղաքակրթության օջախների՝ Հնդկաստանի, Չինաստանի պատմությանը և Հունաստանի աշխարհագրական դիրքին: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան

62.	Հնդկաստան (շարունակություն)	Մանուի օրենքները: Մագաթխայի բարձրացումը: Մաուրյան տերության ստեղծումը:	19.03	Դասընթացին ներկայացվել է Մանուի օրենքները, որոնք երկար ժամանակ գործել են Հին Հնդկաստանում, ինչպես նաև Մագաթխայի բարձրացման, Չանրագուպտայի կառավարման ու նվաճողական քաղաքականության, Մաուրյան պետության ստեղծման մասին: Դասի ընթացքում խոսվել է Աշոկայի գահակալման ու բուդդիզմի հաստատման մասին: Դասընթացավար՝ Սոսե Զանինյան
63.	Տիգրան II Մեծ:	Տիգրանի բազմելը հայոց գահին: Հայ- հռոմեական պատերազմը:	21.03	Դասընթացին ներկայացվել է Տիգրան Մեծի արտաքին և ներքին քաղաքականությունը, Տիգրանա կերտի մայրաքաղաքի կառուցումը, ինչպես նաև հայ-հռոմեական պատերազմներն ու Ք.ա.66 թ. կնքված Արտաշատի պայմանագիրը: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
	Արտավազդ II	Արտավազդ II-ի արտաքին և ներքին քաղաքականությունը, հռոմեա- պարթևական պատերազմը:	26.03	Դասընթացին ներկայացվել է Արտավազդ II-ի գահակալումը, նրա վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, հռոմեա-պարթևական պատերազմներն ու այդ պատերազմներում Մեծ Հայքի մասնակցությունն ու քաղաքական դիրքորոշումը: Դասընթացավար՝ Կարինե Օհանյան

64.	Ամփոփում	Երվանդունիների դինաստիայից մինչև Արտավազդ Բ և հռոմեա- պարթևական պատերազմ ները (ներառյալ), ինչպես նաև Հնդկաստանն ամբողջությամ բ:	28.03	Դասընթացին բանավոր հարցադրումների միջոցով ամփոփվել է Երվանդունիների թագավորությունից մինչև Արտավազդ II և հռոմեա- պարթևական պատերազմները (ներառյալ), ինչպես նաև Հնդկաստանն ամբողջությամբ: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
65.	Հին Չինաստան	Չինաստանի աշխարհագրա կան դիրքը: Ցին Շի Հուանդի:	15.04	Դասընթացին ներկայացվել է հնագույն քաղաքակրթության օրրաններից մեկի՝ Չինաստանի մասին: Խոսվել է նրա աշխարհագրական դիրքի, բնական պայմանների, դասակարգերի, ու պատմական փուլաբաժանումների մասին, ինչպես նաև Չինաստանի ամենանշանավոր կայսրերից մեկի՝ Ցին Շի Հուանդիի կառավարման ու Չինական պատի կառուցման մասին: Դասընթացավար՝ Մերի Բեգինյան

66.	Արտաշեսյան արքայատոհմի անկումը	Արտաշեսյան հարստությունը վերջին գահակալների օրոք:	17.04	Դասընթացին ներկայացվել է Արտաշեսյան թագավորության անկումը: Կատարվեն են համեմատություններ այլ երկրների պատմությունների հետ: Այնուհետև դասի վերջում մասնակիցների հետ միասին ամփոփվեցին տարբեր թեմաներ: Դասընթացավար՝ Գոհար Գևորգյան
67.	Հայաստանը I դարի սկզբին: Արշակունյաց հարստության հիմնումը	Հայկական գահը դրածոների օրոք: Կորբուլոնի արշավանքը Հայաստան: Տրդատ I:	22.04	Դասընթացն ներկայացվել է Հայաստանը մ. թ. ա. I դարի սկզբին, ինչպես նաև դրածո թագավորների, Հռոմի և Պարթևստանի վարած քաղաքականության մասին: Մանրակրկիտ պարզաբանվել է հռոմեա-պարթևական պատերազմների և Տրդատ I-ի գահակալման մասին: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
69.	Հունաստան	Հունաստանի աշխարհագրական դիրքն ու կլիմայական պայմանները:	24.04	Դասընթացին ներկայացվել է Հին Հունաստանի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, հույների բնակեցումն ու եղանակային պայմանները: Դասն ամփոփվել է անցած թեմաների ակտիվ քննարկմամբ: Դասընթացավար՝ Սոսե Զանինյան

70.	Հայաստանը I դարի վերջից մինչև II դարի վերջը	Սանատրուկ II: Վաղարշ I: Հայոց գահը օտար գավթիչների ձեռքին:	29.04	Դասընթացին ներկայացվել է պարսկա-հռոմեական հարաբերությունները I դարում և Հայաստանի դերը, ինչպես նաև Հայաստանում Արշակունիների դինաստիայի հաստատումն ու ամրապնդումը: Կից ներկայացվել է Հռոմի և Սասանյան Պարսկաստանի արտաքին քաղաքական դրությունը: Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
71.	Հայաստանը IV-րդ դարի սկզբին	Հայաստանը Տրդատ III Մեծի օրոք	01.05	Դասընթացին ներկայացվել է Տրդատ III-ի թագադրումը, նրա վարած արտաքին և ներքին քաղաքականությունը, ինչպես նաև քրիստոնեության մուտքը Հայաստան: Դասը ամփոփվել է ակտիվ քննարկմամբ: Դասընթացավար՝ Կարինե Օհանյան
72.	Ամփոփում	Հայ ժողովրդի արարումից մինչև Տրդատ III Մեծի գահակալումը:	05.05	Դասընթացին կատարվել է "Իններորդ լեգեոնի արծիվը" ֆիլմի քննարկում, ինչպես նաև ամփոփեցին կիսամյակի ընթացքում անցած ողջ նյութը, որն իր մեջ ներառում էր հայ ժողովրդի արարումից մինչև Տրդատ III Մեծի գահակալումը: Այս ամենին զուգահեռ սովորեցին հնագույն քաղաքակրթության օջախների՝ Հընդ կաստանի, Չինաստանի պատ մությանը և Հունաստանի աշխարհագրական դիրքին:

				Դասընթացավար՝ Մարիա Ստեփանյան
--	--	--	--	--------------------------------------

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԽՄԲԱԿ

73.	Մանկավարժության ընդհանուր հիմունքներ	Մանկավարժական գիտության հիմնական հասկացությունները: Մանկավարժական գիտություն : ների համակարգը:	10.02	Ներկայացվել է հիմնական հասկացությունները՝ դաստիարակություն, կրթություն, ուսուցում: Մանկավարժություն առարկայի նկարագիրը, մանկավարժական գիտությունների համակարգը, ճյուղերը: Կարտարվել է քննարկում վերլուծություն: Իրականացրել ենք մանկավարժական իրավիճակի վերլուծություն: Դասընթացավարներ՝ Մերի Եզանյան, Ասմիկ Սարկիսյան
74.	Մանկավարժության ընդհանուր հիմունքներ	Մանկավարժության կապը մյուս գիտությունների հետ, կապի հիմնական ձևերը:	12.02	րկայացվել է կապը այլ տությունների հետ՝ կարևորվել է անց իմացությունը և նշանակությունը մանկավարժի համար: Քննարկում Մանկավարժի իմ իդեալը>>թեմայով: քնարկվել է առակ նեղվածության ուսին:

				Դասընթացավարներ՝ Էդիտա Օրդինյան, Սրբուհի Ճուղուրյան:
75.	Մանկավարժության ընդհանուր հիմունքներ	Գիտամանկավարժական հետազոտության մեթոդները:	15.02	Ներկայացվել է մանկավարժական մեթոդները, դրանց տեսակները և կիրառման առանձնահատկությունները: Կատարվել է կոկոլոգիական թեստ, ինչպես նաև տրվել են խորհուրդներ սթրեսի հաղթահարման վերաբերյալ: Դասընթացավար՝ Էդիտա Օրդինյան
76.	Մանկավարժական հաղորդակցում	Տեղեկատվական և հաղորդակցման էությունը:	19.02	Ներկայացվել է խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման տեսակները, դրանց առանձնահատկությունները, ձևերը, գործառույթները, ընթացքը, նպատակը և կազմա կերպման հնարները: Իրականացվել է ճանաչողական թեստ և արդյունքների վերլուծություն, ինչպես նաև քննարկում Դեժավյուի մասին: Դասընթացավարներ՝ Մերի Եգանյան, Ասմիկ Սարկիսյան
77.	Մանկավարժական հաղորդակցում	Ինտերակտիվ և պերցեպտիվ հաղորդակցում, հաղորդակցման և դժվարություններ:	22.02	Ներկայացվել է հաղորդակցման մեխանիզմները, տարրերը, ինչպես նաև հաղորդակցման ժամանակ հանդիպող դժվարությունները և հաղորդակցման արդյունավետության պայմանները: Մտա գրոհի մեթոդով ամփոփվել է հաղորդակցում թեման, կատարվել է հոգեբանական թեստ:

				Դասընթացավարներ՝ Մերի Եզանյան, Ասմիկ Սարկիսյան
78.	Ընդհանուր հոգեբանությ ուն	Հաղորդակցում հասկացություն ն ու տեսակները: Խո սքը որպես հաղորդակցմա ն միջոց, խոսքի ֆունկցիաներն ու տեսակները, խոսք և մտածողությ ուն:	26.02	Ներկայացվել է հաղորդակցում հասկացությունը, տեսակները: Կատարվել է բանավոր քննարկում խոսքի՝ որպես հաղորդակցման միջոցի մասին: Կատարվել է հոգեբանական թեստ <<Արդյո՞ք ճանաչում եք ինքներդ ձեզ>> թեմայով: Մասնակիցները դիտել են տեսանյութ՝ <<Ժպիտը, որպես մարմ նի լեզու>> թեմայով: Ուսումնասիրել են հետաքրքիր փաստեր կնոջ մասին: Դասընթացավարներ՝ Էդիտա Օրդինյան, Սրբուհի Ճուղուրյան
79.	Տարիքային հոգեբանությո ւն	Մանկական օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափու թյունները: Տարիքային փուլեր:	12.03	Դասընթացին ներկայացվել է մանկան օրգանիզմի աճի և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև տարիքային փուլերը: Այնուհետև հետաքրքիր փաստեր մանուկների երազների և մարդու ներսում առկա 3 տեսակների մասին: Տեղի է ունեցել քննարկում՝ «Ի՞նչ հարց կտայի ինձ, եթե լինեի ուսուցիչ» թեմայով: Իսկ վերջում դասը ամփոփվեց ստուգիչ թեստի միջոցով՝ անդրադարձ կատարելով անցածին: Դասընթացավար՝ Ասմիկ Սարկիս յան, Էդիտա Օրդինյան
80.	Հոգեբանությո ւն	Մանիպուլյացի ա	17.03	Դասընթացին ներկայացվել է, թե ինչ է մանիպուլյացիան, ինչպես են մանիպուլյատորները դեկավարում իրենց զոհերին, որոնք են այն խոցելի

				կետերը, որոնք օգտագործվում են մանիպուլյատորի կողմից, արտա հայտություններ, որոնք մանիպուլյացիայի են ենթարկում և իհարկե, թե ինչպես պետք է հակազդել մանիպուլյացիային: Հատարվել է քննարկում և փորձի փոխանակում: Դասընթացավար՝ Մերի Եզանյան
81.	Իրավունքի հիմունքներ	Իրավունքի հասկացությունը, իրավահարաբերություններ:	19.03	Դասընթացին ներկայացվել է «Իրավունք» հասկացությունը, իրավահարաբերությունները: Ակտիվ քննարկվել է Կ.Ռոջեռի՝ «Հարցեր, որոնք կտայի ինձ» ձեռնարկը: Դասընթացավար՝ Ասմիկ Սարկիսյան
82.	Առաջին բուժօգնության և առողջության պահպանման հիմունքներ	Առողջ ապրելակերպ:	22.03	Դասընթացին ներկայացվել է առողջ ապրելակերպը իր ասպեկտներով՝ սննդակարգ, ֆիզիկական ծանրաբեռնվածություն, քնի ռեժիմ, օրվա կարգ, աշխատանքի և հանգստի ռեժիմ: Ներկայացվել է օրվա կարգը, ժամանակի ճիշտ պլանավորումը: Վերջում թեման ամփոփվել է ժամանակի մասին թևավոր խոսքերով: Դասընթացավար՝ Մերի Եզանյան
83.	Փիլիսոփայություն	Ի՞նչ է փիլիսոփայությունը: Եկե՛ք փիլիսոփայենք:	26.03	Դասընթացին ներկայացվել են փիլիսոփայության սահմանումները (Դավիթ Անհաղթ <<Փիլիսոփայության սահմանումները>>), փիլիսոփայության ելակետային հարցերը ինչպես նաև <<Աստծո գոյության 5 ապացույցներ>>: Դասընթացավար՝ Ասմիկ Սարկիսյան
84.	Փիլիսոփայություն	Մարդ թեման:	16.04	Դասընթացին ներկայացվել է «Մարդ» թեման, մասնակիցները ծանոթացան մարդ հասկացության մի շարք փիլիսոփայական սահմանումների:

				Այնուհետև դասը ամփոփվեց հետաքրքրաշարժ հոգեբանական թեստով՝ «Իմացեք ձեր բնավորության գծերի մասին», որի արդյունքում մասնակիցները որոշակի պատկերացում կազմեցին բնավորության գծերի հետ: Դասընթացավար՝ Էդիտա Օրդինյան
85.	Մանկավարժության ընդհանուր հիմունքներ	Ուսուցչի վարքականոն:	24.04	Դասընթացին մանրակրկիտ ներկայացվել է «ուսուցչի վարքականոն» թեման, ինչպես նաև ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնողական համայնք փոխհարաբերությունները: «Մտազրոհ» մեթոդական հնարի միջոցով ամփոփվել է ուսուցչի էթիկայի սկզբունքները: Դասընթացավար՝ Ասմիկ Սարկիսյան
86.	Մանկավարժության ընդհանուր հիմունքներ	Կրտսեր դպրոցականների հարմարումը ուսումնական գործընթացին:	30.04	Դասընթացին ներկայացվել է կրտսեր դպրոցականների հիմնական դժվարությունները՝ ուսումնական գործընթացին հարմարվելիս: Ներկա յացվել է գնահատականի դրական և բացասական ազդեցությունները երեխայի, ծնողի, ուսուցչի համար: Քննարկվել են կրտսեր դպրոցականների մոտ հանդիպող դժվարությունների հիմնական տեսակների, երեխաների ադապտացիայի, հոգեկանի, նրանց հետաքրքրությունների, մոտիվացիայի, իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցեր: Դասընթացավար՝ Մերի Եզանյան

87.	Մանկավարժություն	Ամփոփում	08.05	Դասընթացին իրականացվել է ամփոփում՝ քառամսյա գործունեության վերաբերյալ: Արձանագրել ենք հաջողութ յուններն ու ձեռքբերումները՝ շնորհակալություն հայտնելով մասնա կիցներին ակտիվ մասնակցության համար: Դասընթացավարներ՝ Մերի Եգանյան, Ասմիկ Սարկիսյան
ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՄԲԱԿ				
88.	Ռուսերեն	Այբուբեն, ընտանիք, ասացվածք	13.02	Առաջին դասի ժամանակ բոլոր ուսանողները թեստ հանձնեցին, ըստ որի պարզ դարձավ ուսանողների իմացական մակարդակը: Ուսանողները ներակայացրեցին իրենց: Ծանոթացան ռուսաց լեզվի այբուբենին: Մասնակիցները խոսեցին իրենց ընտանիքի անդամների մասին և համալրեցին իրենց ասացվածքների թիվը՝ սովորելով ռուսական ասացվածք: Այն է՝ «Без труда не вынешь и рыбку из пруда»: Դասընթացավար՝ Անժելիա Մելիքբեկյան, Էրիկ Դավթյան
89.	Ռուսերեն	Թվեր, գոյանուն, մարմնի մասեր, ասացվածք, ընթ. տեքստ:	20.02	Դասընթացին ներկայացվել է թվերը, ճիշտ արտասանելու կանոնները և գրությունը: Ներկայացվել է գոյական անունը և նրան տրվող հարցերը, ինչպես նաև մարմնի և դեմքի մասերը: Եվ վերջում մեկ ասացվածք՝ «Сделал

				дело, гуляй смело»: Դասընթացավարներ՝ Անժելինա Մելիքբեկյան, Եվա Դովլաթյան
90.	Ռուսերեն	Թվերի շարունակություն, սեռեր, ասացվածք, ընթ. տեքստ:	27.02	Դասընթացին ներկայացվել է թվերի շարունակությունը: Մասնակիցները ծանոթացել են ռուսաց լեզվի սեռերին, առանձնահատկություններին և վերջավորություններին: Ներկայացվել են անձնական դերանունները: Ուսանողները բանավոր խոսքը զարգացնելու համար ընթերցել են տեքստ: Դասի ընթացքում տեղի ունեցավ 2 խաղ և ուսանողները ակտիվություն և հետաքրքրություն ցուցաբերեցին: Դասընթացավարներ՝ Եվա Դովլաթյան, Անժելինա Մելիքբեկյան
91.	Ռուսերեն	«Մեռերի շարունակություն, թվականների թելադրություն, գույներ, տարվա եղանակներ»:	06.03	Դասընթացին ներկայացվել է սեռերի շարունակությունը, ինչպես նաև ուսանողները գրեցին թելադրություն՝ թվերի վերաբերյալ: Ակտիվ քննարկմամբ սովորել են գույները: Ընդհանուր բառապաշարի համար ընթերցել են տեքստ և հարստացրել իրենց բառապաշարը: Սովորել են տարվա եղանակները և ամիսները: Դասընթացավար՝ Անժելինա Մելիքբեկյան, Եվա Դովլաթյան

92.	Ռուսերեն	«Շաբաթվա օրեր, ներկա ժամանակ, ընթերցանության տեքստ, ընդհանուր թեստ»:	13.03.	Դասընթացին ներկայացվել են շաբաթվա օրերը, և դրանց կազմավորման պատմությունը: Ուսանողները սովորեցին ուսաց լեզվով ծանոթանալու կանոնները: Այնուհետև ուսումնասիրեցին բայերի ընդհանուր բնութագիրը, և դասավերջում տեղի ունեցավ բանավոր քնարկում` ուսանողների նախընտրելի թեմաների շուրջ: Ընթացքում ուսանողները քննարկեցին իրենց նախընտրելի ֆիլմերը, մուլտֆիլմերը և երգերը:</p> <p>Դասընթացավար` Անժելինա Մելիքբեկյան, Եվա Դովլաթյան
93.	Ռուսերեն	«Անձնական դերանուններ, ներկա ժամանակի բայերից թեստ, սեռերի վերաբերյալ թեստ, ընթերցանության տեքստ»:	20.03.	Դասընթացին իրականացվել է գիտելիքի ստուգում` թեստ գրելու միջոցով: Թեստն իր մեջ ներառում էր անցած բոլոր թեմաները, ինչպես նաև ընթերցանության տեքստեր և ասացվածքներից բառապաշար: Արդյունքները քննարկվեցին ,և միավորները ներկայացվեցին թեստից հետո: Արդյունքները բարձր էին, իսկ առաջադիմությունը` գոհացնող: Դասընթացավարներ` Անժելինա Մելիքբեկյան, Եվա Դովլաթյան
94.	Ռուսերեն	«Անցյալ ժամանակ, խոհանոցի բառապաշար, ընթերցանության տեքստ, եզակի/հոգնակի թիվ»:	27.03	Դասընթացին մասնակիցները գրեցին բառային թելադրություն,որի նպա տակն էր բարելավել ուսանողների ուղղագրության մակարդակը: Ուսանողներն անգիր պատասխանեցին իրենց հանձնարարված բանաստեղծությունները: Դասի ընթացքում ուսումնասիրեցին խոհանոցային

				պարագաները և վերջում ունեցան փոքր խաղ՝ հանելուկների տեսքով: Դասընթացավարներ՝ Անժելինա Մե լիքբեկյան, Եվա Դովլաթյան
95.	Ռուսերեն	«Ներկա ժամանակ, ռուսաց լեզվի հոլովներ»:	29.03	Դասընթացին մասնակիցները գրեցին թելադրություն: Սովորեցին ներկա ժամանակաձևը և հոլովները, այնուհետև վարժությունների միջոցով ամրապնդեցին թեմաները : Դասի վերջում ունեցան փոքր խաղ՝ խաչբառի տեսքով, որը հնարավորություն տվեց մտապահ ելու սովորած նոր բառերը: Դասընթացավարներ՝ Անժելինա Մե լիքբեկյան
96.	Ռուսերեն	«Անցյալ ժամանակաձև, ապառնի ժամանակաձև, բառապաշար (սնունդ)»:	17.04.	Դասընթացի սկզբին մասնակիցները գրեցին բառային թելադրություն, այնուհետև՝ ծանոթացան ռուսաց լեզվի անցյալ ժամանակաձևին, սովորեցին նոր արտահայտություններ և բառեր «Սնունդ» թեմայի վերաբերյալ: Դասընթացը ամփոփվեց հետաքրքիր և յուրօրինակ խաղով: Դասընթացավար՝ Անժելինա Մե լիքբեկյան, Եվա Դովլաթյան

